ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7289/02/25 ք. Երևան
18 Հուլիսի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Արման Օհանյանը ուսումնասիրելով <<Մեդտեխսերվիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության **(այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ)** ընդդեմ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության **(այսուհետ նաև՝ Պատասխանող կամ ՀՀ ԱՆ)**՝ <<Մեդտեխսերվիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի հունիսի 19-ի N 3690-Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

14.07.2025 թվականին <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ ԱՆ-ի՝ <<Մեդտեխսերվիս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի հունիսի 19-ի N 3690-Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

14.07.2025 թվականին հա. ԵԴ2/7289/02/25 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է (Համակարգում հասանելի է դարձել) 15.07.2025 թվականին:

III
(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող ՀՀ ԱՆ-ից պահանջել <<ՀՀ ԱՆ

ԷԱՃԱՊՁԲ-2025/46>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոնք վերջինս պետք է Դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

2. Պատասխանող ՀՀ ԱՆ-ից պահանջել <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/46>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված ՀՀ ԱՆ-ի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- **ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում**, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի

վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- **հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում**:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 29.08.2025 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արման Օհանյան

Digitally signed by OHANYAN ARMAN
4014820192
Date: 2025.07.18 14:06:48 AMT